

Գ. Լ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ, *Շաղկապները ժամանակակից հայերենում*.  
Հայկական ՍՍԽ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան,  
1963, 368 էջ, գինը 1 ո. 18 կոպ.:

Հայ լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկն այսօր ժամանակակից հայերենի ամբողջական գիտական քերականության ստեղծումն է: Այդ ուղղությամբ վերջին տարիներին զգալի աշխատանք է կատարված: Բավական է հիշատակել, որ 1950 թ. հետո լույս են տեսել մեկ ու կես տասնյակից ավելի մենագրություններ, որոնք նվիրված են արևելահայ գրական լեզվի հնչյունաբանության, ձևաբանության (առանձին խոսքի մասերի), շարահյուսության, բառապաշարի ու դարձվածաբանության ուսումնասիրությանը: Գրանցից մեկը երիտասարդ հայագետ Գ. Գարեգինյանի «Շաղկապները ժամանակակից հայերենում» մենագրությունն է: Ընդհատ է, Գարեգինյանի այս աշխատությունից առաջ, մենք արդեն հրապարակի վրա ունեինք Ս. Արրահամյանի «Ժամանակակից հայերենի շեքվող խոսքի մասերը» աշխատությունը, որի գլուխներից մեկը նվիրված է շաղկապին, և Ն. Պառնասյանի «Ստորագասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» գիրքը, որը փաստորեն արդի հայերենի ստորագասական շաղկապների ուսումնասիրություն է միաժամանակ: Բայց գրախոսվող աշխատությունը տարբերվում է դրանցից թե իր նպատակագրմամբ, թե նյութի ընդգրկման ամբողջականությամբ: Գ. Գարեգինյանը իր առաջ խնդիր է դրել տալ շաղկապների ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական ամբողջական և մանրակրկիտ վերլուծությունը:

Աշխատությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում անդրադառնալով հարցի պատմությանը՝ հեղինակը ներկայացնում է, թե հայ քերականները ինչպես են բնորոշել այդ քերականական կարգը և ինչ գիտողություններ են ստեղծել շաղկապների մասին: Այնուհետև նա անցնում է շաղկապի, որպես խոսքի մասի, բնորոշմանը և նրա առանձնահատկությունների որոշմանը: Հայտնի է, որ քերականական գրականության մեջ մինչև օրս էլ չկա խոսքի մասերի դասակարգման միասնական ելակետ: Ումանք՝ առաջնորդվում են իմաստաբանական, բայց մասնա՝ ձևաբանական կամ շարահյուսական, իսկ ումանք էլ՝ այդ երեք հատկանիշներով միաժամանակ և ըստ այդմ կատարում են խոսքի մասերի տարրեր դասակարգումներ, որոշ բաներ (կապերն ու շաղկապները) հավասարեցնում են մասնիկներին՝ դուրս թողնելով խոսքի մասերի շարքից և այլս: Հեղինակը քննելով

լեզվաբանական գրականության մեջ արտահայտված տարրեր տեսակետները, մեր կարծիքով, գալիս է այն ճիշտ եզրակացության, որ շաղկապը ունի իր հատուկ տեղը խոսքի մասերի համակարգում: Շաղկապները, ճիշտ է, գուրկ են նյութական իմաստից և ունեն միայն վերարժեքական իմաստ, բայց չի կարելի պնդել, թե այդ վերարժեքական իմաստը նրանք ստանում են միայն նախադասության մեջ: Նախադասությունից դուրս էլ նրանք ունեն միայն իրենց հատուկ, տարրերակված, մեկը մյուսի հետ չփոխվող բառային իմաստները (օրինակ՝ բայց, որովհետև, որպեսզի և այլն), դրա հետ միաժամանակ նաև իրենց ձևաբանական և շարահյուսական յուրահատուկ հատկանիշները, որոնցով նրանք առանձնանում են բառային մյուս կարգերից որպես ինքնուրույն խոսքի մաս:

Քննելով շաղկապների ձևաբանական կազմը, հեղինակը պարզում է, որ շաղկապները, գրեթե առանց բացառության, լեզվի հին շրջաններում, ինչպես և արդի փուլում առաջացել և առաջանում են այլ խոսքի մասերից: Դա թույլ է տալիս հանգելու այն անժխտելի եզրակացությանը, որ շաղկապները համեմատաբար ուշ առաջացած խոսքի մասերի թվին են պատկանում: Այդ դա այլ կերպ լինել չէր կարող, որովհետև շաղկապների առաջացումն ու զարգացումը կապված է բարդ նախադասության առաջացման ու զարգացման հետ, իսկ բարդ նախադասությունը, ինչպես գրում է հեղինակը, մտածողության ու դատողության մի նոր աստիճանի լեզվական արտահայտություն է, մարդկային մտքի մեծագույն նվաճումներից մեկը: Այն արդյունք է քերականական ընդհանրացման, որին հնարավոր է հասնել նրա բաղադրիչ մասերի կոնկրետ բովանդակությունից վերանալով: Հեղինակը անդրադառնում է նաև համադասության և ստորադասության ծագման հարցին և ընդունում է լեզվաբանական գրականության մեջ տարածված այն կարծիքը, ըստ որի համադասությունը ավելի վաղ է ծագել, քան ստորադասությունը: Բայց Գարեգինյանը ավելի հեռուն գնալով փորձում է այդ ապացույցել հին հայերենի քննելու փաստերով: Նա դատում է այսպես. քանի որ գրաբարի արմատական շաղկապներից 9-ը համադասական են, 4-ը՝ ստորադասական, ապա ստույգ կերպով վկայում է այն մասին, որ հայոց լեզվի հնագույն, նախագրաբարյան շրջանում համադասությունը, ինչպես նաև համա-



դասական շաղկապները, ավելի տարածված էին, քան ստորադասությունը և ստորադասական շաղկապները» (էջ 64), ուրեմն և գրաբարը համադասության նախնականության անմիջական փաստեր է բնականորեն Դժվար չէ նկատել, որ հեղինակի բերած փաստերը ամենեին էլ չեն ապացուցում իր եզրակացությունը։ Նախ՝ չէ՞ որ V դարի հայերենը լեզվի հաղարամյակներ տեսած ուսումնական զարգացման այնպիսի մի «նոր» օղակ է, ինչպես, աւենք, ժամանակակից հայերենը, ինչպես՝ կարելի է գրաբարի հիման վրա դատողություններ անել լեզվի կազմավորման վաղնջական շրջանների մասին բնահանրապես. երկրորդ՝ եթե գրաբարում համադասական շաղկապները թվով ավելի շատ են ստորադասականներից՝ մի՞թե դրանից բխում է, որ առաջինները վերջիններից ավելի շուտ են ստացանքի կարծում ենք, որ այդպիսի եզրակացություն անելու ոչ մի հիմք չունենք։

Ե. Գարեգինյանի աշխատության առաջին մասում մեծ տեղ է բռնում շաղկապների՝ այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցության բնութագրումը։ Հայտնի է, որ լեզվի մեջ, բացի շաղկապներից, կապակցական դեր կարող են կատարել նաև այլ խոսքի մասեր։ Բրենց կապակցական դերով շաղկապների հետ հարաբերակցում են դերանունները, մակբայները, եղանակավորող բառերը և կապերը Հեղինակը տարբերում է մասնակի հարաբերակցություն, երբ այս կամ այն բառը նախ սկսում է գործածվել խոսքի մասային համատեղ արժեքներով (օրինակ՝ որտեղ, երբ, քանի և այլն) և լիակատար հարաբերակցություն, երբ բառը ամբողջական իր կապակցական պաշտոնում, ձեռք է բերում նաև խոսքի մասային մի զուգահեռ արժեք՝ շաղկապական արժեք (օրինակ՝ այլ դերանունը և այլ շաղկապ)։ Եվ վերջո՝ այդ պրոպոզիցիոն հանգեցնում է այն բանին, որ լեզվի մեջ պոզիցիոն կիրառություններ ունեցող որոշ բառեր, աստիճանաբար կորցնելով իրենց ոչ շաղկապական, նշանակութամբ կիրառությունները, անդես են գալիս արդեն սոսկ որպես շաղկապ։ Սա արդեն այլ խոսքի մասերից շաղկապների առաջացման վերջին փուլն է» (էջ 45)։ Հեղինակը հարուստ լեզվական նյութի հիման վրա բնութագրում է այդ հարցը և ցույց տալիս, թե ինչպես որոշ դերանուններ, մակբայներ, եղանակավորող բառեր և կապեր ժամանակի ընթացքում վերածվում են շաղկապների՝ հարստացնելով լեզվի կապակցական բառերի համակարգը։

Աշխատանքի երկրորդ մասը նվիրված է շաղկապների նշանակությունների ու կիրառությունների ուսումնասիրությանը։ Հեղինակը շաղկապները ըստ գործածության եղանակի բաժանում

է 3 խմբի՝ մենադիր (դրանք այն շաղկապներն են, որոնք կապակցական դեր կատարելիս հանդես են գալիս առանձին գործածությամբ), կրկնադիր (որոնք կապակցական դեր են կատարում կրկնությամբ՝ և... և, թե... թե) և զուգադիր (որոնք կապակցական դեր են կատարում զույգերով՝ թեև... բայց, եթե... ապա, որովհետև... ուստի)։

Ինչպես հայտնի է, ավանդական լեզվաբանությունը, հենվելով շաղկապներով կապակցվող լեզվական միավորների շարահյուսական կապի բնույթի վրա, շաղկապները բաժանում է 2 խմբի՝ համադասական և ստորադասական։ Գարեգինյանը ևս բնորոշում է այդ բաժանումը. բայց իրավացիորեն նկատում է, որ համադասությունը և ստորադասությունը շատ դեպքերում կտրուկ կերպով չեն առանձնանում իրարից, լեզվում գոյություն ունեն բարդ նախադասությունների այնպիսի կառուցվածքներ, որոնք տատանվում են համադասության և ստորադասության միջև, կամ համադասական շաղկապներով հաճախ արտահայտվում են ստորադասությանը հատուկ իմաստային երանգներ ու նշանակություններ, ինչպիսիք են՝ պատճառահետևանքային, զիջական, ժամանակային, իսկ ստորադասական շաղկապներով՝ համադասությանը հատուկ երանգներ ու նշանակություններ՝ հակադրական, միավորական։ Գ. Գարեգինյանը նաև իրավացի քննադատության է ենթարկում այն կարծիքը, ըստ որի համադաս նախադասությունները իմաստային ու շարահյուսական տեսակետից ինքնուրույն են ու անկախ նա կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, թե ինչպես վերջապես համադաս նախադասությունները հաճախ գրկվում են քերականական ինքնուրույնությամբ՝ դադարելով նույնիսկ հաղորդակցման առանձին միավոր լինելուց (Մեծ եղբայրը դաշնամուր էր նվագում, իսկ փոքրը՝ ջութակ)։

Հուծելով իր նյութին վերաբերող ընդհանուր հարցերը, Գարեգինյանը անցնում է ժամանակակից հայոց լեզվի շաղկապների կոնկրետ կիրառությունների քննությանը։ Օգտագործելով հայ հարուստ դասական ու խորհրդային գրականության, հրապարակախոսության, բանավոր խոսքի ու բարբառների, մասամբ նաև գիտական դրականության տվյալները, գրախոսվող գրքի հեղինակը վերլուծում է արդի հայերենի շաղկապների արտահայտած իմաստային ամենալուրջ երանգները։ Յուրաքանչյուր համար ետևի է վերցնել թեկուզ և, ու շաղկապների վերլուծությունները։ Դրանք, ինչպես հայտնի է, միավորիչ շաղկապներ են։ Բայց այդ շաղկապները արտահայտում են նաև իմաստային այլ նրբերանգներ։ Այս կապակցությամբ քննվում են հետևյալ հարցերը. համադաս նախադասություն



ների ժամանակային փոխադարձությունները, պատահա-հետեանքային և հակադրական հարաբերությունների դրսևորումը, բարդ նախադասությունների համադաս-հարաբերական կառուցվածքը և շաղկապի դործածությամբ, և շաղկապի կիրառությունները հարակցական հարաբերությունների արտահայտման ժամանակահատվածի այս հարցերից, առանձին հատվածով չենք վստահում ևս նաև և, ու շաղկապների ոճական կիրառության առանձնահատկությունները:

Ընդհանրապես գրախոսվող աշխատության արժանիքներից մեկը գիտական վերլուծությունների մանրակրկիտությունն է: Գարեգինյանը գիտական պատշաճ խորությամբ քննում և բացատրում է ժամանակակից հայնսի շաղկապների իմաստային էությունը, որի անհամապատասխանությունները, նշում, թույլ տալով շաղկապ լեզվի որ ոճերում է տարածված (գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական, ժողովրդական և այլն), վերլուծում է հոմանիշ շաղկապների կիրառական յուրահատկությունները և այլն: Այսպես, նա գրում է, որ Բաքի «Սամվել» և «Եսենթ» վեպերում ոչ մի «սակայն» չի գործածված, որի փոխարեն առատորեն օգտագործված է հոմանիշ բայը: Ընդ, մինչդեռ Մուրացանի «Գեորգ Մարգարիտունի» վեպում երկուսն էլ հավասարապես օգտագործված են (էջ 153) կամ նաև՝ Գոռի «Մահը» վեպում չկան «մինչ» և «հենց» շաղկապները (էջ 314, 316): Հասկանալի է, որ այսպիսի քննությունները ուղղորդված են հեղինակային ոճի ուսումնասիրության տեսակետից:

Որպես արժանիք պետք է նշել նաև այն, որ հեղինակը հարցերի քննությանը մոտենում է ատմական տեսանկյունով և լեզվական երևույթները գիտում ծագման, կազմավորման ու զարգացման մեջ: Առաջնորդվելով այն ճիշտ գրույթով, որ ժամանակակից լեզվի փաստերը նարավոր չէ խորությամբ ու գիտականորեն լուսարանել առանց լեզվի պատմական ֆուլբիլի նկատի ունենալու՝ գրախոսվող աշխատության հեղինակը անհրաժեշտության դեպքում դիմում է մեր լեզվի պատմության, հատկապես գրարարի, փաստերին՝ լեզվական այս կամ այն երևույթի ծագումը ու զարգացումը մեկնաբանելու համար: Միաժամանակ նա հայերենի փաստերը հաճախ համեմատում ու զուգահեռում է այլ լեզուների (հատկապես ռուսերենի ու ֆրանսերենի) հետ, որով և հնարավորություն է ստեղծվում ավելի լայն ֆունի վրա ներկայացնելու տվյալ երևույթը:

Այս բոլորը թույլ են տալիս ասելու, որ Գ. Գարեգինյանի աշխատությունը ժամանակակից հայերենի շաղկապների քննությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություն է Սակայն

արժեքավորելով գիրքը, անհրաժեշտ ենք համարում խոսել նաև նրա թերությունների մասին: Ամենից առաջ նկատվում է լեզվաբանորոշ ձգձգվածություն, երկրորդական, հաճախ աննշան փաստերի թվարկում ու կուտակում, կրկնություններ, անիմաստ կամ անարժեք առանձնացումներ կամ բաժանումներ տվյալ լեզվական խմբի ներսում և այլն: Այսպես, օրինակ, ոչ մի լեզվաբանական արժեք չունեն հեղինակի դատողություններն այն մասին, որ ինչպես շաղկապը կարող է արտահայտել և ըրական արժեք ունեցող համեմատություններ, և անհրաժեշտ, կարճեցում կամ փոխարեքական բնույթի համեմատություններ: Ուրեմն շաղկապը ցույց է տալիս իրական կամ ենթադրական հիմունքից խոշ հետևություն, իսկ երբ շաղկապը՝ իրական կամ անհրաժեշտ ենթադրություն: Չէ՞ որ այդ իմաստների դրսևորումները, ինչպես հեղինակն ինքն է ընդունում, «կախված են կապակցվող մասերի կոնկրետ նյութական բովանդակությունից» (էջ 273), ուրեմն և չունեն բերականական արժեք:

Նշելով հանդերձ, որ երբ ու շաղկապի գործածությունները ոչնչով չեն տարբերվում երբ հոմանիշի համապատասխան կիրառություններից, հեղինակը բազում օրինակներով կրկնապարտադրում է արդեն վերլուծված երևույթներին (էջ 303—304): Նման կրկնությունները գրում քիչ չեն: Դրան պիտի ավելացնել նաև այն, որ հեղինակը հաճախ շոշափում է հարցեր, որոնք բերականական աշխատության մեջ ուղղակի ավելորդ են: Ինչ կարիք կար, օրինակ, ժամանակի շաղկապները վերլուծելուց առաջ բացատրել, որ ժամանակային հարաբերությունների ճիշտ բմրոնումը և արտացոլումը հսկայական նշանակություն ունի մարդու համար, որ «օբյեկտիվ իրականության մեջ մարդու պրակտիկ գործունեությունը անխզելիորեն կապված է ժամանակի հետ, քանի որ նրա տարրերը հատվածներում է իրականանում մարդու արտադրական գործունեությունը» (էջ 293):

Երբում երբեմն հանդիպում ենք միամիտ բացատրությունների: Այսպես, խոսելով և շաղկապի ոճական կիրառությունների մասին՝ հեղինակը Հ. Թումանյանի «Իրորից» բերում է նաև Համբոյի նամակը («...իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուղում են և փող չենք ճարում և նաև ու Ջանին տկուր են և տեղներս շատ նեղ ա և այլն») ու ճիշտ կերպով նկատում, որ «այսպիսով ստեղծվում է յուրահատուկ մի ոճ, նամակային մի ոճ, երբ և-ի առատ գործածությամբ գեղեցական մի քաղցր շունչ է հաղորդվում խոսքին» (էջ 128): Բայց հենց նույն տեղում նա շարունակում է, որ իրր «այս գործածությունը անշուշտ առաջա-

ցել է այն սովորությունից, որ գյուղում նամակները գրում էին բահանաները, որոնք աստ-մածաշնչի ընթերցմամբ քիչ թե շատ ծանոթ էին այս շաղկապի նման կրկնական կիրառու-թյուններին»:

Կ. Դարեգինյանի դիրքը բաղկացած է 363 էջից: Մեծ հաստատ համոզմամբ նյութը կարե-յի էր ներկայացնել ավելի քիչ էջերում՝ գիրքը աղատելով վերացական ու տարտամ դատողու-թյուններից, փաստերի կուտակումներից, կրկ-նություններից, ավելորդ մանրամասնություն-ներից և այլն: Բայց զարմանալիս այն է, որ լեզվից ալիս կարծիքին է, թե շաղկապների մասին ավելի մեծ աշխատություն կարելի էր պրել: Նա մի քանի անգամ նշում է, որ շաղ-կապներին վերաբերող այսինչ կամ այնինչ հար-ցի կարոտ է ավելի մանրամասն կամ հատուկ ուսումնասիրության (տե՛ս, օրինակ, էջ 209) և լեզվից հետո, հետաքրքիր է, քանի՜ էջանոց փոքր պետք է գրել շաղկապների ուսումնասի-րությունը սպառելու համար, թե՛ լեզվահարապետ-այդ թեման անսպառելի է: Իհարկե, գուցե ոչ միայն շաղկապների, այլև լեզվական ավելի փոքր միավորների ուսումնասիրությունը սպա-ռել հնարավոր չէ, եթե շեշտը դնում ենք փաս-տերի կուտակման և դրանց նկարագրման վրա: Բայց պատկեր փոխվում է, երբ շեշտը դնում ենք ընդհանրացումների վրա, մի բան, որ հաշ-վի չի առնվում վերջին շրջանում հրատարակված մի շարք լեզվաբանական հաստատվող գրքերում, որոնց ծավալը մեծանում է ի հաշիվ նույնա-տիպ փաստերի կուտակման, կրկնությունների և ավելորդ դատողությունների:

Ի՞նչ բանի խոսք տերմինաբանության մասին: Այս բերականական տերմինաբանությունը գուտ-սզգային է, և նրանում օտար փոխառություն-ներ չկան մյամ համարյա չկան: Թրակացու բե-

րականության մեկնիչները և հետագա շրջանի հայ բերականները հունա-լատինական բերա-կանական տերմինների իմաստներն են միայն վերցրել՝ կազմելով դրանց համապատասխան հայերեն լատեր (բերականություն, բայ, դե-րանուն, նախադասություն, ենթակա և այլն): Ուսկայն վերջերս որոշ լեզվաբաններ հրաժար-վելով այս լավ ավանդից և գնալով հեշտ ճա-նապարհով՝ ուղղակի գերադասում են օտար տերմինների գործածությունը, առանց մոռան-լու, որ այդպիսի լեզվաբանի խնդիրներից մեկն էլ բերականական տերմինաբանության հետագա մշակումն ու դարգացումն է: Այսպես, որոշ լեզ-վաբանական-բերականական աշխատությունե-րում օտար տերմիններն ուղղակի աչք են ծա-կում՝ տիրություն անելով «ֆունկցիոն» սկսած մինչև «ստորակտուրայի» և «մորֆոմայից» ըս-կրած մինչև «լեքսիկայի» ոլորտներում: Բա-լեզվիչունի դիրքը այս թերությունը շունի, բայց նրանում էլ գործածված են որոշ օտար տերմիններ, որոնց համարժեքները ունենք կամ կարելի էր ուտեղծել, լրիվակ՝ սիստեմ (համա-կարդ), ֆունկցիոն (պաշտոն), պատուղա (բա-ղար), ինտոնացիա (հնչյուն) և այլն: Առանձ-նապես մերժելի է գրքում բազմաթիվ անգամ գործածված Լիլիպիկ բառը, որը այլ բան չէ մշակական, եթե ոչ զննված, ուրեմն և պետք է գործածվեր այս տերմինը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Բ. Դարե-գինյանի «Շաղկապների ժամանակակից հայե-րենում» աշխատությունը, ընայած իր թերու-թյուններին, գիտական պատշաճ մակարդակով կատարված արժեքավոր լեզվաբանական ուսում-նասիրություն է և նպաստ արդի հայերենի գիտական բերականության ստեղծման ճանա-պարհին:

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

W. H. RÜDT-COLLENBERG, *The Rupenides, Hethumides and Lusignans, the structure of Armeno-Cilician dynasties*, Calouste Gulbenkian Armenian Library, Paris, 1963.

Վ. Հ. ՌՅՈՒՏ-ԿՈԼԵՆԲԵՐԳ, *Ռուբինյաններ, Հեթումյաններ և Լու-սինյաններ, Կիլիկյան հայկական դինաստիաների կառուցվածքը*, Հայ-կական մատենադար Գալուստ Կյուլպենկյան հիմնադրույթան, Փարիզ, 1963:

Նույն է տեսել արևելագետ Ռյուտ-Կոլենբեր-գի ուսումնասիրությունը՝ նվիրված Կիլիկյան Հայաստանի Ռուբինյանների, Հեթումյանների և Լուսինյանների տոհմագրությանը: Այդ կարևոր հարցի մասին շատ քիչ է գրված: Հայագետները իրենց ուսումնասիրություններում գրեթե անտե-

ռել են Կիլիկիայի հայկական թագավորության գինաստիաների տոհմագրության պատմությու-նը, գլխավորապես արժարժեքով տեսնական, տոցիայական, կրոնական, գիմնագիտական և իրավական հարցեր:

Ռյուտ-Կոլենբերգի ուսումնասիրությունը գա-